Հոդվածի հղումը. Աթոյան Վ. (2023), Կամրջելով գիտելիքն ու քաղաքականությունը. «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հիմնադրման տասնամյակին, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 1(1), էջ 86-110, DOI: 10.52174/29538114_2023.1-86
Ներկայացվել է խմբագրություն՝ 05.04.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 08.05.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 18.07.2023 թ.

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ հասարակագիտության ամբիոնի վարիչ,
քաղաքական գիտությունների դոկտոր
https://orcid.org/0000-0002-4974-0312

ԿԱՄՐՋԵԼՈՎ ԳԻՏԵԼԻՔՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻՆ

Հոդվածը նվիրված է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տասնամյա գործունեության հիմնական արդյունքների վերհանմանն ու արժևորմանը: Հետազոտության շրջանակներում առավելապես կիրառվել են հետազոտության ինստիտուցիոնալ և պատմական մեթոդները: Ուսումնասիրության ընթացքում հավաքագրվել, մշակվել և վերլուծվել են «Ամբերդ» կենտրոնի կողմից և վերջինիս մասին հրապարակված փաստաթղթերը, տեղեկատվությունը, այդ թվում՝ լրատվամիջոցների անդրադարձները, իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների հաղորդագրությունները, ինչպես նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և «Ամբերդի» ներկայացուցիչների հարցազրույցներն ու հրապարակումները: Հետազոտության ընթացքում նշանակալի օժանդակ դեր է խաղացել հեղինակի երկարամյա աշխատանքի փորձառությունը «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում որոշակիացվել են «Ամբերդ» կենտրոնի գործունեության հաջողված և դեռևս բարելավման ենթակա ուղղությունները, տեղն ու դերը Հայաստանի հանրային քաղաքականության ներկա փուլում, ինչպես նաև քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու հաս-

գաղափարների հետ փոխհարաբերությունների բնույթը: Հետազոտության արդյունքներն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել «Ամբերդ» կենտրոնի երկարաժամկետ զարգացման ռազմավարության մշակման համար:

Հիմնաբառեր. *«Ամբերդ», Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ուղեղային կենտրոն, հետազոտական կենտրոն, հանրային քաղաքականություն, գիտելիք, հետազոտություն*

JEL: D80, I23
DOI: 10.52174/29538114_2023.1-85

Ներածություն: 2023 թվականին լրանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հիմնադրման տասնամյակը[1]: Անշուշտ, անցած տարիները[2] չափազանց կարևոր էին վերջինիս ձևավորման, ինստիտուցիոնալացման, Հայաստանի փորձագիտական դաշտում և «գաղափարների արտադրության» ոլորտում կայացման համար:

Հատկանշական է, որ Հայաստանում համանման կառույցները սովորաբար երկարակեցությամբ աչքի չեն ընկնում և հիմնադրումից որոշ ժամանակ անց պասիվացնում կամ ընդհանրապես դադարեցնում են գործունեությունը[3]: Այդ է պատճառը, որ մեզանում սակավաթիվ են պատմություն և ավանդույթներ ունեցող, փորձագիտության մշակույթ թելադրող վերլուծական կառույցները, որոնք ունեն հանրային ճանաչվածություն և հեղինակություն:

Հակառակ պատկեր է կայացած քաղաքական մշակույթ ունեցող որոշ երկրներում: Այս առումով, արտերկրի օրինակելի համալսարանական ուղեղային կենտրոններից են Սթենֆորդի համալսարանի Հուվերի ինստիտուտը և Հարվարդի համալսարանի Բելֆերի կենտրոնը, որոնք հիմնադրվել են համապատասխանաբար՝ 1919 և 1973 թվականներին: Նշված հաստատությունները մինչ օրս նշանակալի դերակատարում ունեն ամերիկյան փորձագիտական դաշտում, հանրային քաղաքականությանն առնչվող քննարկումներում և արժանիորեն դասվում են աշխարհի լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների շարքին: Պատահական չէ, որ նույնիսկ հաշվի առնելով ռեսուրսների և միջավայրային գործոնների խիստ տարբերությունը[4], այդ թվում՝ քաղաքական մշակույթի էական տարբերությունները, «Ամբերդի» ստեղծման գաղափարի հիմքում եղել է հենց վերոնշյալ հաստատությունների հաջողված փորձը:

Հարկ է նշել, որ իր գործունեության առաջին տասնամյակում, «փոքր քայլերի մարտավարության»[5] դրույթներին համահունչ, «Ամբերդին» հաջողվել է

---

[1] Տե՛ս ՀՊՏՀ-ն հետազոտական համալսարան դառնալու ճանապարհին, *Տնտեսագետ*, *1*(672), 2013, էջ 5:

[2] Տրվեց նորաստեղծ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատանքների պաշտոնական մեկնարկը, 14.06.2013, *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/news-2357

[3] Տե՛ս **Աթոյան Վ.,** *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները*. Եր., «Զանգակ», 2019, էջ 175:

[4] ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների միջին տարեկան բյուջեն կազմում է 10-20 մլն ԱՄՆ դոլար, իսկ առավել խոշորներինը տատանվում է 90-350 մլն ԱՄՆ դոլարի շրջանակներում:

[5] «Փոքր քայլերի մարտավարությունը» հիմնված է մշտական կատարելագործման ճապոնական «Կայդզեն» անվանումը ստացած փիլիսոփայական դրույթների վրա, որոնք միտված են գործընթացների և կառավարման անդադար կատարելագործմանը:

ոչ միայն կայուն գործունեություն ծավալել, այլև ապահովել վերընթաց զարգացում՝ հետզհետե սահմանելով առավել բարձր նշաձողեր: Փոխառելով աշխարհի խոշորագույն ուղեղային կենտրոնի՝ ամերիկյան *RAND* կորպորացիայի նախկին նախագահ (այժմ՝ պատվավոր նախագահ) Մայքլ Ռիչի՝ իր ղեկավարած հաստատությունը բնութագրող խոսքերը[6]՝ կարող ենք նշել, որ «Ամբերդը» ստեղծվել է ոչ միայն որպես պարզապես համալսարանական հետազոտական կենտրոն, այլև գաղափար և համոզմունք առ այն, որ ամենաբարդ խնդիրների համակարգային լուծման լավագույն ուղին սկսվում է փաստերի և երևույթների օբյեկտիվ վերլուծությունից:

«Ամբերդի» ստեղծման տեսլականի հիմքում նաև այն գաղափարն էր, որ համալսարանների հետազոտական գործունեությունը հասարակական կարևոր գործառույթ է, որը նպատակաուղղված է գիտության՝ որպես բուհի գործունեության առանցքային բաղադրիչներից մեկի զարգացմանը և նոր գիտելիքի ստեղծմանը[7]: Ներկայումս արդեն առավել տեսանելի է, որ «Ամբերդի» ստեղծումով և առաջին տասնամյակում արձանագրված հաջողություններով նշանակալի հիմքեր են ձևավորվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ)՝ արդիական հետազոտական բուհի վերափոխվելու համար[8]:

Վերոնշյալ գաղափարական և հավակնոտ ծրագիրը հիմք ընդունելով՝ ձևակերպվել է «Ամբերդի» առաքելությունը, որը միտված է՝ «....արդի բազմամակարդակ մարտահրավերների պայմաններում նորարարական գաղափարների մշակման, հետազոտությունների, վերլուծությունների, կրթական ծրագրերի իրականացման, պետական և մասնավոր հատվածի շահառուների համար քաղաքականության երաշխավորությունների պատրաստման և հանրային քաղաքականության ոլորտում իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների, ակադեմիական հանրության, գործարար հատվածի և հասարակության միջև հաղորդակցային դերակատարության միջոցով նպաստելու Հայաստանի հասարակության և պետության առջև ծառացած խնդիրների լուծմանը և բնականոն զարգացման ապահովմանը»[9]:

Գրականության ակնարկ: Ժամանակակից աշխարհում ուղեղային կենտրոնները դարձել են ոչ միայն քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ազգային անվտանգության, միջազգային հարաբերությունների և բազմաթիվ այլ ոլորտների ու հիմնախնդիրների ուսումնասիրության առաջատար հաստատություններ, այլև որոշում կայացնողների և հանրության վրա ունեցած ազդեցությամբ նշանակալի դերակատարում են ստանձնել հանրային քաղաքականության գործընթացում՝ հիմնարար հետազոտություն-

---

[6] Տե՛ս **Rich M.D.** (2020). Think Tanks in the Era of Truth Decay. *RAND Corporation*. https://www.rand.org/blog/rand-review/2020/10/think-tanks-in-the-era-of-truth-decay.html

[7] Տե՛ս **Atoyan K., Babajanyan A., Atoyan V.** (2021). The Modern Challenges of Higher Education Institutions in Armenia. *Asian Journal of Education and Social Studies*, *22(4)*, էջ 29. https://doi.org/10.9734/AJESS/2021/v22i430540

[8] Տե՛ս **Աթոյան Կ.,** *ՀՊՏՀ ռեկտորի ողջույնի խոսք*. Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2018, էջ 3: ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, *Տնտեսագետ, 5*(676), 2013, էջ 14-16:

[9] Մեր մասին (N/A). *ՀՊՏՀ*. https://asue.am/am/amberd/about

ների արդյունքները կիրառական հարթություն տեղափոխելով և կամրջելով գիտելիքն ու քաղաքականությունը:

Հետևաբար՝ պատահական չէ, որ վերջին տասնամյակներում քաղաքագիտության ոլորտում նկատելիորեն ավելանում են ուղեղային կենտրոնների ոլորտին ու դրանց գործունեության տարբեր հարցերին նվիրված ակադեմիական հրապարակումները: Այս առումով, ոլորտի ուսումնասիրության և վերջինիս՝ որպես քաղաքագիտական հետազոտությունների յուրօրինակ դպրոցի ձևավորման գործում անկյունաքարային դեր են խաղացել՝ Փ. Դիքսոնի[10], Ջ. Մաքգանի[11], Դ. Սթոունի[12], Դ. Աբելսոնի[13], Թ. Մեդվեցի[14], Է. Ռիչի[15] և Ռ. Սթրույքի[16] աշխատանքները: Միաժամանակ, տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների գործունեության առանձնահատկությունների հետազոտման գործում նշանակալի օրինակներից են Փ. Աբերգի և Ս. Էյնարսոնի[17], Մ. Ահմադի[18], Կաստիլո-Էսպարսիայի[19], Է. Դենհամի[20], Փ. Հարթի[21], Ք. Ձեզիերսկայի[22], Պ. Աբբի[23], Թ. Լաքսի[24] և բազմաթիվ այլ հեղինակների հրապարակումները:

---

[10] Տե՛ս **Dickson P.** (1971). *Think Tanks*. New York: Atheneum.

[11] Տե՛ս **McGann J.G.** (2016). *The Fifth Estate: Think Tanks, Public Policy, and Governance*. Washington, D.C.: Brookings Institution Press; **McGann J.G.** (2007). *Think Tanks and Policy Advice in the U.S.: Academics, Advisors, and Advocates*. New York: Routledge; **McGann J.G.** (2019). *Think Tanks: The New Knowledge and Policy Brokers in Asia*. Washigton, D.C.: Brookings Institution Press.

[12] Տե՛ս **Stone D.** (2001). Think Tanks, Global Lesson-Drawing and Networking Social Policy Ideas. *Global Social Policy*, *1*(3), էջ 338–360. https://doi.org/10.1177/146801810100100304; **Stone D.** (1996). *Capturing the Political Imagination: Think Tanks and the Policy Process*. London: Routledge.

[13] Տե՛ս **Abelson D.E.** (2006). *Capitol Idea: Think Tanks and US Foreign Policy*. Montreal-Kingston: McGill-Queen's University Press; **Abelson D.E.** (2002). *Do Think Tanks Matter?: Assessing the Impact of Public Policy Institutes* (2nd ed.). Montreal-Kingston: McGill-Queen's University Press:

[14] Տե՛ս **Medvetz T.** (2004). *Think Tanks in America*. Chicago and London: The University of Chicago Press:

[15] Տե՛ս **Rich A.** (2004). *Think Tanks, Public Policy, and the Politics of Expertise*. Cambridge: Cambridge University Press; **Rich A.** (2001). US think tanks and the intersection of ideology, advocacy and influence. *Nira Review*, *8*(1), էջ 54-59:

[16] Տե՛ս **Struyk R.J.** (2003). *Managing Think Tanks: Practical Guidance for Maturing Organizations*. Washington DC: Urban Institute Press; **Struyk R.J.** (1999). *Think Tanks in Post-Soviet Bloc Democracies*. Washington, DC: Urban Institute Press:

[17] Տե՛ս **Åberg P., Einarsson S., Reuter M.** (2021). Correction to: Think Tanks: New Organizational Actorsin a Changing Swedish Civil Society. *Voluntas, 32*, էջ 634–648, https://doi.org/10.1007/s11266-019-00174-9

[18] Տե՛ս **Ahmad M.** (2008). US Think Tanks and the Politics of Expertise: Role, Value and Impact. *Political Quarterly, 79*(4), էջ 529-555:

[19] Տե՛ս **Castillo-Esparcia A., Castillero-Ostio E., Castillo-Díaz A.** (2020). The think tanks in Spain. Analysis of their digital communication strategies. *Revista Latina de Comunicación Social, 77*, էջ 253-273, https://www.doi.org/10.4185/RLCS-2020-1457

[20] Տե՛ս **Denham A., Garnett M.** (1998). *British Think-Tanks and the Climate of Opinion*. London; Bristol, PA: UCL Press:

[21] Տե՛ս **Hart P. T., Vromen A**. (2008). A new era for think tanks in public policy? International trends, Australian realities. *Australian Journal of Public Administration*, *67*(2), էջ 135-148:

[22] Տե՛ս **Jezierska K.** (2022). Coming out of the liberal closet. Think tanks and de-democratization in Poland. *Democratization*, https://doi.org/10.1080/13510347.2022.2130259

[23] Տե՛ս **Abb P.** (2015). China's Foreign Policy Think Tanks: institutional evolution and changing roles. *Journal of Contemporary China*, *24*(93), էջ 531-553, https://doi.org/10.1080/10670564.2014.953856

[24] Տե՛ս **Laux T.** (2018). *The cultural logics in the field of scientific policy advice in France. Analyzing the justifications in the organizational identity of think tanks*. FMSH-WP, էջ 139:

Բացի այդ, ակադեմիական գրականության մեջ հանդիպում են նաև առանձին ուղեղային կենտրոններին և դրանց պատմությանն ու հանրային քաղաքականության մեջ դերակատարությանը նվիրված ուսումնասիրություններ: Դրանց շարքում կարող ենք հիշատակել Ա. Աբելլայի[25], Ի. Փարմարի[26], Ռ. Շլուզինգերի[27], Բ. Սմիթի[28] և Ն. Բջերե-Պոուլսոնի[29] աշխատությունները:

Հարկ է նշել, որ հայկական ակադեմիական հանրույթի շրջանակներում նույնպես նկատելիորեն ավելացել է հետաքրքրությունը ուղեղային կենտրոնների ոլորտի ուսումնասիրության նկատմամբ: Վերջին տարիներին հրապարակվել են ուղեղային կենտրոնների տարբեր հիմնահարցերին նվիրված հայալեզու հրապարակումներ, որոնցից են սույն հոդվածի հեղինակի[30], Գ. Հարությունյանի[31], Ա. Սիմավորյանի[32], Ս. Սարուխանյանի[33], Դ. Գալստյանի[34], Մ. Հարությունյանի[35], Ջ. Մելիքյանի և Ա. Բարսեղյանի[36] հրապարակումները:

---

[25] Տե՛ս **Abella A.** (2008). *Soldiers of reason: The RAND corporation and the rise of the American empire*. New York: Harcourt, Inc.:

[26] Տե՛ս **Parmar I.** (2004). *Think tanks and power in foreign policy: a comparative study of the role and influence of the Council on Foreign Relations and the Royal Institute of International Affairs, 1939-1945*. Houndmills: Palgrave Macmillan:

[27] Տե՛ս **Schulzinger R. D.** (1984). The Wise Men of Foreign Affairs. The History of the Council on Foreign Relations. In *The Wise Men of Foreign Affairs. the History of the Council on Foreign Relations*. Columbia University Press:

[28] Տե՛ս **Smith B.** (1966). *The RAND Corporation: Case Study of a Nonprofit Advisory Corporation*. Cambridge, MA and London, England: Harvard University Press, https://doi.org/10.4159/harvard.9780674866256

[29] Տե՛ս **Bjerre-Poulsen N.** (1991). The Heritage Foundation: A Second-Generation Think Tank. *Journal of Policy History, 3*(2), էջ 152-172, https://doi.org/10.1017/S0898030600004838

[30] Տե՛ս **Աթոյան Վ.** (2020), Ուղեղային կենտրոնների ռազմավարական արդիականացման հարցեր. «*Ամբերդ» տեղեկագիր, 3*(4), 2020, էջ 64-70: **Աթոյան Վ.,** Օտարերկրյա ազդեցության հիմնախնդիրները ուղեղային կենտրոնների ոլորտում, «*Ամբերդ» տեղեկագիր, 5*(6), 2020, էջ 65-73: **Աթոյան Վ.**, Ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնները, «*Ամբերդ» տեղեկագիր, 4*(5), 2020, էջ 67-74: **Աթոյան Վ.,** *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները*, Եր., «Զանգակ», 2019, 216 էջ: **Աթոյան Վ., Մովսիսյան Շ.**, *Չինաստանի ուղեղային կենտրոնները*, Եր., «Տնտեսագետ», 2016, 80 էջ: **Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա.**, *Ուղեղային կենտրոնները արդի քաղաքական գործընթացներում*, Եր., «Տնտեսագետ», 2016, 100 էջ:

[31] Տե՛ս **Հարությունյան Գ.**, «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը, *21-րդ ԴԱՐ, 1*(35), 2011, էջ 5-17:

[32] Տե՛ս **Սիմավորյան Ա.,** Թուրքիայի ուղեղային կենտրոնների զարգացման նախադրյալները. այժմեական խնդիրներ, *21-րդ ԴԱՐ, 6*(46), 2012, էջ 17-34: **Սիմավորյան Ա,** Թուրքիայի փորձագիտական կենտրոնների որոշ հարցերի շուրջ, 2019 *(hal-03317988)*: **Սիմավորյան Ս.**, Հայկական հետազոտություններ Թուրքիայի ուղեղային կենտրոններում, *Գլոբուս, 5*, 2014, էջ 33-38:

[33] Տե՛ս **Սարուխանյան Ս.,** «Ուղեղային կենտրոնները» Իսրայելում. ազգային և ցանցային կառույցների համադրություն, *21-րդ ԴԱՐ, 6*(28), 2009, էջ 55-66: **Սարուխանյան Ս.,** Իրանի «ուղեղային կենտրոնները», *«Նորավանք»* ԳԿՀ, 2009, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4230

[34] Տե՛ս **Գալստյան Դ., Գեղամյան Վ.**, Նոր իրողություններ Ադրբեջանի հետազոտական կենտրոնների ոլորտում, *21-րդ ԴԱՐ, 4*(38), 2011, էջ 5-23:

[35] Տե՛ս **Հարությունյան Մ.,** Արցախի Հանրապետությունում ուղեղային կենտրոնի արդի խնդիրների ու առաջնահերթությունների մասին, *Գիտության և կրթության դերը պետության զարգացման գործում, Մեսրոպ Մաշտոց համալսարան*, Ս., «Դիզակ Պլյուս», 2022, էջ 115-133:

[36] Տե՛ս **Մելիքյան Ջ., Բարսեղյան Ա., Սիմավորյան Ա.**, *Տարածաշրջանի հետազոտական կենտրոնները (Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա)*, Եր., «Նորավանք», 2015, 242 էջ:

Այնուամենայնիվ, այս հոդվածն իր բնույթով էականորեն առանձնանում է՝ հաշվի առնելով, որ վերլուծության առանցքում է առանձին հաստատության գործունեության ուսումնասիրությունը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում հիմնականում կիրառվել է ինստիտուցիոնալ մեթոդը: Տվյալ մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել բացահայտելու ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև այլ, այդ թվում՝ պետական կառավարման ոլորտի, ակադեմիական և փորձագիտական հաստատությունների հետ փոխհարաբերությունների և փոխգործակցության բնույթը:

Վերոնշյալի շրջանակներում ուսումնասիրվել են սոցիալական տարբեր հարթակներում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի պաշտոնական էջերը, ՀՊՏՀ կայքէջում վերջինիս գործունեության ներկայացման համար նախատեսված բաժինը, նախորդ տասը տարիների ընթացքում հրապարակված տեղեկատվությունը, այդ թվում՝ պաշտոնական փաստաթղթերը, կենտրոնի տարեկան գործունեության հաշվետվությունները, ՀՊՏՀ «Տնտեսագետ» ամսագրի և Հայաստանի լրատվամիջոցների անդրադարձները, օրենսդիր և գործադիր իշխանության տարբեր մարմինների պաշտոնական հաղորդագրությունները, ինչպես նաև ՀՊՏՀ և «Ամբերդի» ներկայացուցիչների հարցազրույցները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել է նաև պատմական մեթոդը, որի շնորհիվ ուրվագծվել են ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի անցյալի և ներկա գործունեության որոշակի փոփոխություններն ու դրանց օրինաչափությունները, միաժամանակ բացահայտվել՝ որոշ միտումներ և մարտահրավերներ, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմելու կենտրոնի ապագայի հետ կապված զարգացումների հնարավոր սցենարների մասին: Վերոնշյալ մեթոդի կիրառումը թույլ է տվել նաև *SWOT* վերլուծության միջոցով կազմված աղյուսակում դուրս բերել «Ամբերդ» հետազոտական կենտրոնի թույլ և ուժեղ կողմերը, ինչպես նաև վերջինիս առջև ծառացած մարտահրավերներն ու հնարավորությունները:

Հիմնվելով հավաքագրված, համակարգված, մշակված և վերլուծված տեղեկատվության, նախկինում արված ուսումնասիրությունների արդյունքների, ինչպես նաև հեղինակի՝ «Ամբերդում» տասնամյա աշխատանքի անձնական փորձառության վրա՝ ձևակերպվել են որոշակի եզրակացություններ, որոնք կարող են օգտակար լինել «Ամբերդի» երկարաժամկետ զարգացման ռազմավարական տեսլականի մշակման և ապագայի առավել ցանկալի սցենարների ձևավորման համատեքստում:

Վերլուծություն: Ուսումնասիրելով «Ամբերդի» անցած ուղին՝ կարելի է արձանագրել, որ վերջինս իր փորձագիտական ներուժով և հետազոտությունների արդյունքներով ստացված գործնական առաջարկներով մշտապես ձգտել է նպաստել Հայաստանի առջև ծառացած տարբեր հիմնախնդիրների լուծմա-

նը[37]: Պատահական չէ, որ «Ամբերդի» հաջողությունները նկատվել և արձանագրվել են նաև իր գործունեության ժամանակաշրջանն ընդգրկող ՀՊՏՀ բոլոր ղեկավարների կողմից[38], որոնք ևս, անշուշտ, իրենց աջակցությամբ նշանակալի ներդրում են ունեցել կենտրոնի կայացման գործում:

Իր հիմնադրումից ի վեր կենտրոնը ինստիտուցիոնալ մակարդակով և անձնական կապերով հարաբերություններ է ձևավորել, համագործակցություն է հաստատել իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների, ակադեմիական և փորձագիտական հաստատությունների հետ[39]: Այս առումով, կենտրոնի իրականացրած հետազոտությունների հիմնական շահառուներն են եղել պետական գերատեսչությունները, իսկ հետազոտական թեմաների ընտրությունը մշտապես կատարվել է վերջիններիս հետ քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով նաև նրանց կարիքները:

Արդեն 2014 թվականին կենտրոնն իրականացրեց և հրապարակեց գրեթե երկու տասնյակ հետազոտություն: Անցած տարիներին միայն «Ամբերդ» մատենաշարով լույս է տեսել տնտեսական, քաղաքական, սոցիալական, անվտանգային և տարածաշրջանային հիմնախնդիրներին նվիրված շուրջ վեց տասնյակ հետազոտություն (աղյուսակ 1), որոնք իրականացվել են ՀՊՏՀ ակադեմիական կազմի և ուսանողության շուրջ 300 ներկայացուցիչների ներգրավմամբ: Հրապարակվել են բազմաթիվ զեկույցներ և ոլորտային ամփոփագրեր: Կենտրոնի փորձագետները մասնակցություն են ունեցել նաև տասնյակ ոլորտային ռազմավարությունների և օրենքների նախագծերի մշակման գործընթացում:

---

[37] Տե՛ս Հետազոտությունները պետք է ուղղորդել դեպի գործնական խնդիրների լուծում, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն (2013, սեպտեմբերի 11), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/news-2263

[38] Տե՛ս **Աթոյան Կ.,** *ՀՊՏՀ ռեկտորի ողջույնի խոսք*. Տնտեսության և հասարակության զարգացում, 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2018, էջ 3: Պաշտոնավարման չորս տարի, *Տնտեսագետ, 2*(683), 2015 էջ 8: ՀՊՏՀ գիտական գործունեությունը վերլուծում է պրոռեկտոր Գագիկ Վարդանյանը, *Տնտեսագետ, 5*(696), 2017 էջ 7: **Հայրապետյան Ռ.** Մեր կարճաժամկետ արդյունքը ՀՊՏՀ հեղինակության փոփոխությունն է, (2019, ապրիլի 2). *Banks.am*. https://banks.am/am/news/interviews/17109; **Գալոյան Դ.,** Դիմորդների մեծ հետաքրքրությունը Տնտեսագիտական համալսարանի նկատմամբ վստահության և վարկանիշի բարձրացման արդյունք է (2022, հունիսի 24), *Արմենպրես*. https://armenpress.am/arm/news/1086824.html; **Գալոյան Դ.,** Բարեփոխումների ուղին ընտրած Տնտեսագիտական համալսարանը զգալի ձեռքբերումներ է արձանագրել (2019, սեպտեմբերի 5), *Panorama.am*. https://www.panorama.am/am/news/2019/09/05/Դիանա-Գալոյան/2162528?fbclid=IwAR1a1zJkX2J5skjnnoaQ793mfk3t3UxDgEkdKxFuYq_0Cm887KT5OH2dYIE; **Գալոյան Դ.,** ՀՊՏՀ-ում իրականացվում են համալիր բարեփոխումներ (2019, նոյեմբերի 6), *Banks.am*. https://banks.am/am/news/interviews/18089

[39] Տե՛ս **Atoyan V., Ohanyan S., Malkjyan A.,** Development prospects of Armenian university affiliated think tanks: AMBERD Research Center. *Almanach via Evrasia*, *4,* 5, 2015:

Աղյուսակ 1

«Ամբերդ» մատենաշարով հրապարակված հետազոտությունների ցանկ (2014-2022 թթ.)

Հետազոտություն	Մատենաշար №	Տարեթիվ
Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում	1	2014
Մրցակցություն և կարգավորում	2	2014
Տեխնոլոգիական զարգացում և թվային տնտեսություն	3	2014
Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ	4	2014
Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները	5	2014
Տարածական զարգացում	6	2014
Ֆինանսական շուկաներ և ծառայություններ	7	2014
Հարկաբյուջետային քաղաքականությունը և ՀՀ կառուցվածքային բյուջեի գնահատումը	8	2014
Գործազրկությունը և աշխատավարձի անհավասարությունը ՀՀ-ում	9	2014
ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը, փոխհարաբերությունները աշխատանքի շուկայի հետ և գնագոյացման հիմնախնդիրները	9/1	2014
ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները	10	2014
Տնտեսական զարգացում	11	2014
Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում	12	2014
Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով)	13	2014
Արտասահմանյան առաջատար համալսարանական «ուղեղային կենտրոնների» գործունեության ուսումնասիրությունն ու լավագույն փորձի ներդրման հնարավորությունները ՀՀ-ում	14	2014
Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում	15	2014
Ադրբեջանի տնտեսական թռիչքը. առասպե՞լ, թե՞ իրականություն	16	2014
Արտասահմանյան և հայաստանյան առաջատար համալսարանների փորձի ուսումնասիրությունը և դրա ներդրման հնարավորությունները ՀՊՏՀ-ում	17	2015
Հայաստանը տարածաշրջանային զարգացումների համատեքստում. տնտեսություն և քաղաքականություն	18	2015
Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գերակայությունները արդի փուլում	19	2015
Բնական պաշարների օգտագործման նորամուծական եղանակների միջազգային փորձը և Հայաստանում կիրառման հնարավորությունները	20	2015
Կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական հետևանքները և հարմարեցման միջոցառումները Հայաստանում	21	2015
ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները	22	2015
Պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում	23	2015
ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները մաքսային միության անդամակցության պայմաններում	24	2015

Բիզնեսի բարոյականության և սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրները ՀՀ-ում	25	2015
Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գերակայությունների գնահատումը և կանխատեսումը	26	2015
Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները	27	2015
Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ	28	2015
Չինաստանի ուղեղային կենտրոնները	29	2016
ՀՀ արտահանման բազմազանեցման և աճի հնարավորությունները	30	2016
ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը աղքատության կրճատման վրա	31	2016
Մասշտաբային բնակարանաշինությունը՝ որպես ներքին արտադրության խթանմամբ, տնտեսական աճի ապահովման և համաչափ տնտեսական զարգացման ուղղություն	32	2016
Ուղեղային կենտրոններն արդի քաղաքական գործընթացներում	33	2016
Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները ՀՀ-ում	34	2017
ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը	35	2020
ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակում	36	2020
Ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորությունների գնահատումը ՀՀ մարզերում (ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի օրինակով)	37	2021
Կրթական հաստատությունների գործունեության ֆինանսավորման արդյունավետության գնահատում	38	2021
Միջհամայնքային համագործակցության առանձնահատկությունները ՀՀ Վայոց ձորի մարզի տնտեսական զարգացման համատեքստում	39	2021
Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ	40	2021
ՀՀ ցորենի և ալյուրի շուկաների հետազոտություն	41	2021
Հայաստանի տնտեսության վրա բացասաբար ազդող գործոնները, դրանք բնութագրող ցուցանիշների ընտրությունը և այդ ցուցանիշների համար առավելագույն կամ նվազագույն շեմերի սահմանման հնարավորությունները	42	2021
ՀՀ տարածքային կառավարման համակարգի հեռանկարները՝ տեխնոլոգիական գործիքակազմի ներդրմամբ	43	2021
Պետական մասնակցությամբ բժշկական կազմակերպությունների կառավարման արդյունավետության գնահատում	44	2021
Էլեկտրոնային առևտուր. հնարավոր ռիսկեր, կորուստներ և զարգացման հնարավորություններ	45	2021
Աղբահանության ոլորտում աղբի հավաքման, փոխադրման, պահպանման, հեռացման և/կամ օգտահանման ու վերամշակման գործընթացների ֆինանսատնտեսական վերլուծություն և ծախսարդյունավետության գնահատում	46	2021
Արհեստական բանականության կիրառական լուծումները ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներում	47	2021
Պարենային անվտանգության գնահատում և մոդելավորում կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում	48	2021
Հայաստան-Չինաստան տնտեսական համագործակցության հեռանկարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագծի շրջանակներում	49	2021

ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում	50	2022
ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացման հնարավորությունները	51	2022
Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը ՀՀ-ում	52	2022
ՀՀ թռչնամսի շուկայի հետազոտություն	53	2022
Գյուղատնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերում	54	2022
ՀՀ սահմանամերձ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակում (Գեղարքունիքի և Տավուշի մարզերի օրինակով)	55	2022
Ինժեներական էկոհամակարգեր և արդյունաբերության մեջ նորարարությունների խթանում. միջազգային փորձ, օրենսդրական դաշտ, զարգացման միտումներ	56	2022
Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները	57	2022
Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համալիր զարգացման տեսլականը	58	2022

Վերոնշյալի համատեքստում կարող ենք առանձնացնել 2016 թվականին «Ամբերդի» կողմից իրականացված մասշտաբային բնակարանաշինության հետազոտական ծրագրի արդյունքները[40], որոնք քննարկվել են նաև ՀՀ Կառավարությունում՝ ՀՀ վարչապետի, փոխվարչապետի, քաղաքաշինության և էկոնոմիկայի նախարարների հետ կազմակերպված աշխատանքային հանդիպման ընթացքում[41]: Պետք է հիշատակել նաև 2017 թվականին ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի[42], 2018 թվականին ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակի[43] և 2019 թվականին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՀՀ ՏՄՊՊՀ)[44] հետ կնքված հուշագրերն ու դրանց շրջանակներում ծավալված արդյունավետ համագործակցությունը: Միայն 2018 թվականի ընթացքում ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակներում «Ամբերդի» հետազոտողները փորձաքննության են ենթարկել և համապատասխան փաթեթ մշակել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այժմ՝ ՀՀ վիճակագրական կոմիտե) 2018 թ. տարեկան գործունեության

---

[40] Տե՛ս **Աթոյան Կ., Հախվերդյան Դ., Մկրտչյան Թ., Հակոբյան Կ., Գրիգորյան Ա.**, *Մասշտաբային բնակարանաշինությունը՝ որպես ներքին արտադրության խթանմամբ, տնտեսական աճի ապահովման և համաչափ տնտեսական զարգացման ուղղություն*, Եր., «Տնտեսագետ», 2016, 146 էջ:

[41] Տե՛ս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2016 թ. հաշվետվություն (N/A). *ՀՊՏՀ*. https://asue.am/upload/files/amberd_reports/HASHVETVUTYUN_2016.pdf, էջ 10:

[42] Տե՛ս ԱԺ-ն և «Ամբերդ» հետազոտական կենտրոնը համագործակցության հուշագիր են ստորագրել (2017, հուլիսի 21), *Արմենպրես*. https://armenpress.am/arm/news/899509/azh-n-ev-amberd-hetazotakan-kentrony-hamagortsakcutyan.html; Համագործակցություն ՀՀ ԱԺ-ի և ՀՊՏՀ-ի միջև, «Ամբերդը»՝ տնտեսական հարցերով գիտական խորհրդատու-գործընկեր, *Տնտեսագետ, 4*(695), 2017, էջ 10:

[43] Տե՛ս Համագործակցության հուշագիր (2018, դեկտեմբերի 13), *ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ*. https://seco.am/information/press_releases/107?lang=hy

[44] Տե՛ս Համագործակցություն՝ հանուն տնտեսական մրցակցության պաշտպանության. Ստորագրվեց համագործակցության հուշագիր (2019, նոյեմբերի 29), *ՀՊՏՀ*. https://asue.am/news/cooperation-for-the-protection-of-economic-competition-a-memorandum-of-cooperation-was-signed?fbclid=IwAR3W6z_wSpDibhUgY4ODN2nBk0PkIVR2yHI7wN5It4hpy_3FGwwgDDfaVmp0

ծրագրի, ՀՀ ՏՄՊՊՀ (այժմ՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով՝ ՀՀ ՄՊՀ) 2017 թ. տարեկան գործունեության հաշվետվության և 2018 թ. տարեկան գործունեության ծրագրի, զուգահեռ՝ ներմուծման բնագավառում վերջինիս առաջարկած փոփոխությունների առաջարկի փաթեթի, «Օտարերկրյա ներդրումների մասին», «Ազատ տնտեսական գոտիների մասին», «Էներգետիկայի մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծի, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի վերաբերյալ[45]: Միաժամանակ՝ ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակի և ՀՀ ՄՊՀ-ի հետ համագործակցության շրջանակներում լույս են տեսել հրատապ խնդիրներին նվիրված մի քանի հետազոտություններ՝[46] ակադեմիական միտքը ծառայեցնելով պետական քաղաքականությանը[47] և նպաստելով Հայաստանում փաստերի ու փորձագիտության վրա հիմնված պետական կառավարման մշակույթի կայացմանը:

Վերոնշյալի համատեքստում պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ ինստիտուցիոնալ համագործակցությունն ընդգրկել է նաև Հայաստանի մարզերը: Նշվածի վերջին օրինակներից է Տավուշի մարզպետարանի հետ 2021 թվականին կնքված հուշագիրը, որի շրջանակներում նախատեսվում էր մշակել մարզում ոլորտային զարգացման մոտեցումներ ու մոդելներ, վեր հանել խնդիրները, մատնանշել լուծումներ, որոնք կարող են համապատասխան քաղաքականության մշակման հիմք ծառայել[48]:

Հատուկ անդրադարձի է արժանի նաև «Ամբերդի» ստանձնած մեկ այլ կարևոր գործառույթ: Մշտապես թիրախում ունենալով իր հետազոտական նախագծերում ուսանողների, ասպիրանտների, երիտասարդ հետազոտողների ներգրավման հարցը և իրականացնելով «տաղանդների կառավարում» (Talent management)՝ կենտրոնը դարձել է յուրահատուկ կադրային դարբնոց՝ նպաստելով տասնյակ երիտասարդների հետազոտական փորձառության ձեռքբերմանը, մասնագիտական աճին և հանրային ճանաչմանը: Ակնհայտ է, որ տարիներ շարունակ հետևողականորեն իրականացվող այս քաղաքականությունն արդեն իսկ մեծապես նպաստել է ՀՊՏՀ և «Ամբերդի» խորհրդանշական կապիտալի[49] աճին և «ամբերդականների» ցանցային համայնքի ձևավորմանը:

---

[45] Տե՛ս ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2018 թ. հաշվետվություն (N/A). *ՀՊՏՀ*. https://asue.am/upload/files/amberd_reports/amberd-annual-report-2018.pdf, էջ 8:

[46] Տե՛ս **Մկրտչյան Թ., Մելքումյան Զ., Օհանյան Գ., Պողոսյան Վ., Խաչիկյան Լ.**, *ՀՀ ցորենի և այլուրի շուկաների հետազոտություն*, Եր., «Տնտեսագետ», 2021, 102 էջ, https://doi.org/10.52174/978-9939-61-227-0; **Մկրտչյան Թ., Համբարձումյան Է., Օհանյան Գ., Ղարագյոզյան Մ., Կարապետյան Ն., Գալստյան Մ.**, *ՀՀ թռչնամսի շուկայի հետազոտություն*, Եր., «Տնտեսագետ», 2022, 130 էջ, https://doi.org/10.52174/978-9939-61-250-8

[47] Տե՛ս **Գևորգյան Գ.,** Հարցազրույց Դ. Հախվերդյանի հետ, Ակադեմիական միտքը ծառայում է պետական կառավարմանը, *Տնտեսագետ, 5*(711), 2020, էջ 27:

[48] Տե՛ս ՀՊՏՀ-ն և Տավուշի մարզպետարանը համատեղ հետազոտություն կիրականացնեն (2021, փետրվարի 5), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/asue-and-tavush-marzpetaran-will-carry-out-joint-researches

[49] Խորհրդանշական կապիտալը կարող է սահմանվել որպես շոշափելի օգտակարություն ունեցող ոչ տնտեսական կապիտալ, որը թույլ է տալիս համախմբել տարաբնույթ ռեսուրսներ և դյուրացնել այս կամ այն սոցիալական փոխանակությունը: Դա կարող է արտահայտվել ազդե-

Անցած տասնամյակում ընդգրկուն է եղել նաև կենտրոնի միջազգային գործընկերների շրջանակն ու համագործակցության աշխարհագրությունը: Միջազգային գործընկերների շարքում պետք է առանձնանցնել հատկապես Չինաստանի Շենսիի մանկավարժական համալսարանի Կենտրոնական Ասիայի ինստիտուտի[50] և Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի համաշխարհային տնտեսագիտության և քաղաքականության ինստիտուտի[51] հետ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կնքած հուշագրերն ու փոխգործակցությունը, որոնց շրջանակներում իրականացվել են բազմաթիվ փոխայցեր, մասնակցություն է եղել միջազգային աշխատաժողովների և գիտաժողովների: Տարբեր ձևաչափերով համագործակցություն է հաստատվել նաև եվրոպական երկրների և ՌԴ մի շարք ակադեմիական ու հետազոտական կառույցների հետ: Այս համատեքստում հարկ է նշել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի (ՌԴ) հետ վերջին տարիներին ձևավորված արդյունավետ համագործակցությունը, որի շրջանակներում «Ամբերդի» փորձագետները մասնակցել են համատեղ հետազոտական նախագծերի իրականացմանը: Առանձին հիշատակման է արժանի նաև ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համագործակցության փորձը և դրա շրջանակներում իրականացված հետազոտությունը[52]:

Հայաստանի ուղեղային կենտրոնների շարքում պետք է ընդգծել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ ունեցած արդյունավետ համագործությունը, որը երկու հաստատությունների միջև հիմք դրվեց 2014 թվականին կնքված հուշագրով[53] և, ցավոք, մի քանի տարի առաջ հիմնադրամի լուծարման հետևանքով ընդհատվեց: «Նորավանքի» հետ համագործակցության նշանակալի օրինակներից է մեր տարածաշրջանի որոշ երկրների ուղեղային կենտրոնների ոլորտի ուսումնասիրմանը նվիրված հետազոտական նախագիծը, որն իրագործել է երկու հաստատությունների փորձագետներից կազմված համատեղ խումբը[54]:

Հատկանշական է, որ դեռևս 2014 թվականին «Ամբերդում» ներդրվեց համացանցային իր հարթակներում տարբեր հիմնախնդիրներին նվիրված վերլուծական հոդվածների հրապարակման ավանդույթը, որի հեռահար նպա-

---

ցության մեծացմամբ, որոշակի սոցիալական հանրույթին պատկանելության, շահավետ կապերի, հեղինակության ձեռքբերման ձևով և այլն:

[50] Տե՛ս Գիտահետազոտական գործունեություն, *Տնտեսագետ, 1*(692), 2017, էջ 41:

[51] Տե՛ս ՀՊՏՀ-ի և Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի համաշխարհային տնտեսագիտության և քաղաքագիտության ինստիտուտի միջև համագործակցության հուշագիր է ստորագրվել (2019, մայիսի 22), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/amberd-center-and-the-institute-of-world-economy-and-political-science-of-the-chinese-academy-of-social-sciences-signed-a-memorandum

[52] Տե՛ս **Մովսիսյան Մ., Ղանթարչյան Ռ., Կեսոյան Ն., Կարապետյան Լ., Հարությունյան Գ., Պապոյան Տ., Մարկոսյան Ա., Գևորգյան Վ., Ղանթարչյան Լ.**, *ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում*, Եր., «Տնտեսագետ», 2022, 218 էջ, https://doi.org/10.52174/978-9939-61-245-4

[53] Տե՛ս Իրադարձություններ, գիտական սեմինարներ, *Տնտեսագետ, 5*(681), 2014, էջ 13:

[54] Տե՛ս **Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա., Մովսիսյան Շ.**, *Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները*, Եր., «Տնտեսագետ», 2015, 58 էջ: **Մելիքյան Ջ., Բարսեղյան Ա., Սիմավորյան Ա.,** *Տարածաշրջանի հետազոտական կենտրոնները (Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա)*, Եր., «Նորավանք», 2015, 242 էջ:

տակն էր սեփական վերլուծական ամսագրի հիմնումը: 2019 թվականի վերջին «Ամբերդ» տեղեկագրի անդրանիկ համարի հրապարակմամբ դա նույնպես իրականություն դարձավ[55]: Ներկայումս երկամսյա պարբերականությամբ լույս տեսնող «Ամբերդ» տեղեկագիրը կենտրոնի մտավոր արտադրանքի հիմնական այցեքարտերից է:

Արդյունավետ են եղել նաև «Ամբերդի» քայլերը համացանցային տիրույթում, որտեղ կենտրոնը հիմնադրման պահից ներկայացված է եղել՝ տարեցտարի ավելացնելով իր ներկայացվածությունն ու ակտիվությունը: Այսպես՝ դեռևս 2014-ից *Facebook* և *LinkedIn* սոցիալական ցանցերում գործում են «Ամբերդի» պաշտոնական էջերը: 2018-ին դրանց ավելացավ *Twitter*-յան էջը, իսկ 2020-ին կենտրոնի ալիքը գործարկվեց նաև *Telegram* հարթակում: Հարկ է նշել, որ վերոնշյալ էջերի հետևորդների ընդհանուր թիվը շուրջ չորս հազար է, ինչը Հայաստանի չափանիշներով հետևորդների էական ընդգրկվածություն է նշանակում՝ նպաստելով կենտրոնի ճանաչվածության ընդլայնմանը և հանրային ազդեցության մեծացմանը: Միաժամանակ, 2013 թ-ից ՀՊՏՀ պաշտոնական կայքում առանձին ներկայացված է «Ամբերդի» էջը, որտեղ ամփոփված է կենտրոնի գործունեության և հրապարակումների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը: Այս ամենի տրամաբանական շարունակությունը կարող է լինել «Ամբերդի» առանձին պաշտոնական կայքի գործարկումը, ինչի ուղղությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում:

Հարկ է շեշտել նաև ԶԼՄ-ների հետ «Ամբերդի» ձևավորած համագործակցությունը, որը վերջին տարիներին նոր լիցքեր է ստացել՝ ներառելով հուշագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներն ու կենտրոնի փորձագետների առավել տեսանելի մեդիաակտիվությունը: Այս համատեքստում պետք է հիշատակել «Արմենպրես» լրատվական գործակալության հետ 2021 թվականի հունիսին կնքված հուշագիրը[56] և նույն թվականի հոկտեմբերից «Նոյյան Տապան» լրատվական գործակալության հետ համագործակցությամբ հեռարձակվող «Ամբերդ. քրոնիկոն» հաղորդաշարը[57], որին Հայաստանի տնտեսական և հասարակական կյանքի հրատապ հիմնախնդիրներին առնչվող թեմաների քննարկման նպատակով պարբերաբար հյուրընկալվում են «Ամբերդի» փորձագետները:

Բնական է, որ «Ամբերդի» արձանագրած հաջողություններն աստիճանաբար առավել նկատելի պետք է դառնային նաև միջազգային մակարդակում[58], ինչն իր արտացոլումը գտավ համաշխարհային վարկանիշներում: Այսպես՝ 2016 թվականին արձանագրած ցուցանիշներով «Ամբերդը» առաջին անգամ տեղ գտավ ուղեղային կենտրոնների համաշխարհային վարկանշավորում իրականացնող միակ կառույցի՝ Փենսիլվանիայի համալսարանի տարեկան վարկանշային զեկույցում, իսկ արդեն 2018 թվականի տվյալներով արձանագրեց մինչ այդ աննախադեպ արդյունք՝ տեղ գտնելով աշխարհի լավագույն

---

[55] Տե՛ս Անխախտ պարբերականություն՝ նոր հանդեսին, *Տնտեսագետ, 1*(707), 2020, էջ 39:

[56] Տե՛ս «Արմենպրեսը» և Տնտեսագիտական համալսարանը գործընկերներ են (2021, հունիսի 8), *Հայաստանի Հանրապետություն*. https://hhpress.am/socium/2021/1532/

[57] Տե՛ս Մեկնարկել է «Ամբերդ. քրոնիկոն» հաղորդաշարը (2021, հոկտեմբերի 25), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/amberd-chronicle-program

[58] Տե՛ս «Ամբերդը»՝ հեղինակավոր ինստիտուտի զեկույցում, *«Կրթություն» շաբաթաթերթ, 18-19*(731-732) (2016, ապրիլի 27), էջ 11:

100 համալսարանական ուղեղային կենտրոնների շարքում[59]: Հաջորդ տարվա զեկույցում «Ամբերդը» պահպանեց իր դիրքերը աշխարհի համալսարանական ուղեղային կենտրոնների լավագույն հարյուրյակում[60]՝ միաժամանակ առաջխաղացում գրանցելով տարածաշրջանային ուղեղային կենտրոնների դասակարգման մեջ[61]:

Ամփոփելով «Ամբերդի» գործունեության առաջին տասնամյակում արձանագրված հիմնական արդյունքները՝ հարկ է համառոտ անդրադառնալ նաև կենտրոնի ապագային և, առավել լայն համատեքստում, ուղեղային կենտրոնների ոլորտում արձանագրվող որոշ միտումներին: Այսպես՝ արտերկրի փորձագետների իրականացրած վերջին հետազոտությունները փաստում են, որ միջազգային վատթարացող քաղաքական միջավայրն ի հայտ է բերում նոր մարտահրավերներ: Դրանց շարքում առանձնանում են համաշխարհային մակարդակով և առանձին երկրներում քաղաքական անկայունությունը, որը խիստ բացասաբար է անդրադառնում ուղեղային կենտրոնների գործառնական կայունության վրա: Միաժամանակ, ուղեղային կենտրոնների ֆինանսավորման հնարավորությունների նվազումը, հանրային տիրույթում տեսանելիության հետ կապված խնդիրները, հարափոփոխ աշխարհում հետազոտական օրակարգի հաճախակի վերանայման անհրաժեշտությունը, հետազոտության արդյունքում ստացված նոր գիտելիքի[62] և, ընդհանուր առմամբ, փորձագետների նկատմամբ հանրության և որոշում կայացնողների խորացող անվստահությունը[63], որը ամերիկացի գիտնական Ս. Ֆուլերը հաճախ անվանում է «հակափորձագիտական հեղափոխություն»[64, 65], իրենց հերթին համարժեք պատասխան պահանջող արդի մարտահրավերներ են: Ավելին, տեղեկատվական հասարակության պայմաններում ձևավորված կիբեռհիրականությունը նոր գործառնական խնդիրներ է առաջ քաշում ուղեղային կենտրոնների դերի վերահիմաստավորման, աշխատանքների նորովի կազմակերպման և հարափոփոխ իրողություններին հարմարվելու առումով:

Վերոնշյալին պետք է հավելել արդեն հայկական իրողություններին վերաբերող և, մասնավորապես, Հայաստանի քաղաքական մշակույթում ուղեղային կենտրոնների դերակատարության հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց համակարգային կերպով անդրադարձել ենք մեր այլ ուսում-

---

[59] Տե՛ս «Ամբերդը»՝ աշխարհի համալսարանական ուղեղային կենտրոնների Top 100-յակում (2019, փետրվարի 4), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/world-top-100-think-tanks

[60] 2021 թվականից Փենսիլվանիայի համալսարանը դադարեցրել է 2008 թվականից իրականացվող աշխարհի ուղեղային կենտրոնների վարկանշավորումը:

[61] Տե՛ս Penn Libraries (N/A). *University of Pennsylvania*, https://repository.upenn.edu/think_tanks/

[62] Տե՛ս **Baertl A., Gilbreath D., Nicolle S.** (2022). Think tank state of the sector report 2022. *On Think Tanks*. https://onthinktanks.org/publications/think-tank-state-of-the-sector-2022/; **Gonzales Hernando M., Stone D., Pautz H**. (2017). Think tanks can transform into the standard-setters and arbiters of quality of 21st century policy analysis. *Impact of Social Sciences Blog*. http://eprints.lse.ac.uk/70024/

[63] Տե՛ս **Drezner D.W.** (2017). *The Ideas Industry: How Pessimists, Partisans, and Plutocrats Are Transforming the Marketplace of Ideas*. New York: Oxford University Press, էջ 46:

[64] «Հակափորձագիտական հեղափոխությունը» նշանավորվում է մի կողմից՝ կրթության և ուսուցման անընդհատ աճող մատչելիությամբ, սակայն, մյուս կողմից՝ այդ երևույթն ուղեկցող քաղաքական և գիտական հեղինակությունների նկատմամբ մեծացող անվստահության վերաբերմունքով:

[65] Տե՛ս **Fuller S.** (2018). *Post Truth: Knowledge as a Power Game*. London-New York: Anthem Press:

նասիրություններում[66]: Այս հոդվածի շրջանակներում պարզապես խտացված նշենք, որ Հայաստանի ուղեղային կենտրոնների ոլորտի առջև ծառացել են բազմաթիվ մարտահրավերներ, այդ թվում՝ պետական կառավարման համակարգի և մասնավոր հատվածի հետ արդյունավետ ինստիտուցիոնալ փոխգործակցության ոչ բավարար մակարդակը, ուղեղային կենտրոնների գործունեության համար կարևոր՝ նվիրատվությունների ավանդույթի ձևավորված չլինելը, ֆինանսական ռեսուրսների ու աղբյուրների անբավարարությունը և քաղաքականությանն առնչվող հարցերում որոշումների ընդունման գործընթացում ներգրավվելու սահմանափակ հնարավորությունները: Պակաս կարևոր չեն նաև տեղեկատվական տիրույթում ուղեղային կենտրոնների ոչ բավարար ակտիվության և արհեստավարժ փորձագիտական ռեսուրսի ներգրավման խնդիրները[67]:

Ինչպես իր աշխատությունում ճշմարտացիորեն նշում է *The Wilson Center* ամերիկյան ուղեղային կենտրոնի փոխնախագահ, Ջոն Հոփկինսի և Ջորջ Վաշինգտոնի համալսարանների պրոֆեսոր Էնդրյու Սիլին՝ հաստատության համար վճռորոշ նշանակություն ունի, թե որքանով ճշգրիտ կգտնվեն հետևյալ հարցերի միջև հատման կետերը. ի՞նչ է ուզում անել կազմակերպությունը, ի՞նչն է լավ անում, ո՞րն է նրա ռեսուրսային բազան: Այս առումով, նա առանձնացնում է չորս ռեսուրս, որոնք կրիտիկական նշանակություն ունեն ցանկացած ուղեղային կենտրոնի հաջողության համար.

- մարդկային ռեսուրսներ՝ վարչական աշխատակազմ, փորձագետներ և կառավարման մարմիններ, որոնք կազմում են կազմակերպության մտավոր կապիտալը,
- ֆինանսական ռեսուրսներ՝ դրամաշնորհներ, պայմանագրեր, անհատական և կորպորատիվ նվիրատվություններ, նախագծերի իրականացումից և նպատակային հիմնադրամից ստացված եկամուտներ,
- համագործակցություն համախոհ կազմակերպությունների հետ, ինչը թույլ է տալիս հաստատությանը բազմապատկել իր ազդեցությունը,
- հեղինակություն (բրենդ), որն ուշադրություն և տաղանդներ է գրավում[68]:

Վերոնշյալի համատեքստում, հիմնվելով իրականացված ուսումնասիրության, նախորդ հետազոտությունների, ինչպես նաև գլոբալ մասշտաբով ի հայտ եկող միտումների և հնարավոր զարգացումների վրա, *SWOT* վերլուծության ձևաչափով դիտարկենք «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (աղյուսակ 2): Հավելենք, որ ուժեղ և թույլ կողմերը նշելիս դիտարկվել են վերլուծության օբյեկտի ներքին, իսկ հնարավորությունների և սպառնալիքների պարագայում՝ արտաքին գործոնները: Կարծում ենք՝ ներկա իրավիճակի ճշգրիտ

---

[66] Տե՛ս **Աթոյան Վ.,** *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները.* Եր., «Զանգակ», 2019, 216 էջ: **Atoyan V.,** (2022). Armenian Think Tanks are Facing Old and New Challenges. *On Think Tanks.* https://onthinktanks.org/articles/armenianthink-tanks-are-facing-old-and-new-challenges; **Atoyan V.** (2021). Emerging Industry of Think Tanks in Armenia. *Messenger of ASUE*, *6*, 106-125. https://doi.org/10.52174/1829-0280_2021_6_106

[67] Տե՛ս **Աթոյան Վ.,** Կրթությունից ուղեղային կենտրոն (2020, փետրվարի 2). *Invest.* https://investmagazine.am/2020/02/18/կրթությունից-ուղեղային-կենտրոն/?fbclid=IwAR12VpHgJKJfuETp PvM00MwUdJ0yJK_JgSCC4yEuxLZCAJagJNQ0I8EmOs

[68] Տե՛ս **Selee A.** (2013). *What should Think Tanks Do? A Strategic Guide to Policy Impact.* Stanford: Stanford University Press, էջ 14:

արձանագրումը և դեռևս առկա խնդիրների վերհանումը կարող են օգտակար լինել և հիմք ծառայել հետագայում «Ամբերդի» զարգացման ռազմավարական պլանավորման համար:

Աղյուսակ 2

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
• Կայուն ֆինանսավորում • Փորձառու և երիտասարդ հետազոտողների հավասարակշռված համադրություն • Հանրային ու փորձագիտական շրջանակներում ճանաչում • Իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների հետ ձևավորված փոխգործակցություն • Գործնական նշանակություն ունեցող հետազոտությունների իրականացման փորձառություն	• Ֆինանսավորման աղբյուրների թույլ բազմազանեցում • Հետազոտական արդյունքների ոչ բավարար առևտրայնացում • Հետազոտական արդյունքների վիզուալացման և հանրայնացման գործում արդի տեխնոլոգիաների անբավարար կիրառում • Ոչ ֆորմալ կրթության գործիքակազմի ոչ բավարար կիրառում
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
• Ձևավորված ինստիտուցիոնալ կապերի միջոցով նոր նախագծերի իրականացման հնարավորություն • ՀՊՏՀ գիտական ներուժի օգտագործման հնարավորություն • Տարբեր տարիներին հետազոտական նախագծերում ներգրավված մասնագետների ցանց և նրանց կապերի օգտագործման հնարավորություն • ՀՊՏՀ ֆոնդահայթայթման բաժնի աջակցությամբ դրամաշնորհային նախագծերի մեջ ներգրավման հնարավորություն	• Հետազոտությունների արդյունքների և փորձագիտության նկատմամբ հետաքրքրության նվազում • Բուհերի նախատեսվող միավորման հետևանքով ապագա կարգավիճակի անորոշություն • Փորձագիտական ոլորտում քաղաքականացվածության մեծացում • Երիտասարդության շրջանում հետազոտական գործունեությամբ զբաղվելու շահագրգռության նվազում

Եզրակացություն: Ամփոփելով ուսումնասիրությունը՝ նշենք, որ իր տասնամյա գործունեության ընթացքում թեև արդեն իսկ արձանագրվել են տեսանելի և շոշափելի արդյունքներ, «Ամբերդը» միջազգային չափանիշներով դեռևս երիտասարդ կառույց է և զարգացման երկար ճանապարհ ունի անցնելու՝ ապագայի առավել հավակնոտ նպատակներին հասնելու համար: Միանշանակ է նաև, որ միայն նվիրումը, արհեստավարժ աշխատանքը, հավատը, համոզմունքը, մնայունը ժամանակավորից, առաջնայինը երկրորդականից տարբերումը, թիրախային նպատակների և առաջնահերթությունների հստակ սահմանումը, ինստիտուցիոնալ էվոլյուցիայի անխզելիության ապահովումն ու փորձագիտական աշխատանքը որպես կոչում, այլ ոչ որպես զբաղմունք, իսկ «Ամբերդի»՝ որպես գաղափարի, այլ ոչ որպես միայն հետազոտական կենտրոնի գիտակցումը կարող են դառնալ *Sine qua non*[69], որի միջոցով հնարավոր է կերտել հաստատություն, որը կունենա հաջողության պատմություն, ուրույն ավանդույթներ, խորհրդանշական կապիտալ և հանրային հեղինակություն:

Վերոնշյալի համատեքստում տեղին է կրկին հիշատակել *RAND* կորպորացիան, որին իր իսկ փորձագետները բնորոշում են որպես ազգային արժեք՝ հաշվի առնելով դրա ներդրումը համազգային նպատակների իրականացման

[69] Լատ.՝ անհրաժեշտ պայման, առանց որի հնարավոր չէ:

գործում[70]: Ուստի անհրաժեշտ է վստահություն հայտնել, որ արդյունավետ աշխատանքի և հետևողական մոտեցումների պարագայում «Ամբերդը» ապագայում ի զորու կլինի հանրային քաղաքականությունում առավել նշանակալի դերակատարում ստանձնելու և վերածվելու մեր իրականությունը փոփոխող կառույցի ու յուրօրինակ ազգային ձեռքբերման:

Ապագան քննարկելիս հարկ է հաշվի առնել նաև անորոշության և անկանխատեսելիության գործոնները: Այս առումով, ապագայի սցենարները, անշուշտ, կարող են բազմաթիվ լինել: Այնուամենայնիվ, այն հարցը, թե ինչպես ենք մենք այսօր տեսնում «Ամբերդը» մեկ, հինգ, տասը տարի կամ, ավելին՝ տասնամյակներ հետո, և թե ինչպիսի ապագայի տեսլական ունենք ներկայում, անչափ կարևոր է՝ համապատասխան ռազմավարություն մշակելու, հետագա գործողությունները հստակ պլանավորելու և, արդյունքում՝ ապագան առավել ցանկալի հունով կամ սցենարով ուղղորդելու համար: Հետևաբար՝ թե ինչպիսի ապագա կունենա «Ամբերդը», մեծապես պայմանավորված է ներկայում ձևավորված տեսլականից, կայացրած որոշումներից և դրանց իրականացմանն ուղղված գործողությունների արդյունավետությունից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աթոյան Կ., *ՀՊՏՀ ռեկտորի ողջույնի խոսք*, Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ, ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2018:
2. Աթոյան Կ., Հախվերդյան Դ., Մկրտչյան Թ., Հակոբյան Կ., Գրիգորյան Ա., *Մասշտաբային բնակարանաշինությունը՝ որպես ներքին արտադրության խթանմամբ, տնտեսական աճի ապահովման և համաչափ տնտեսական զարգացման ուղղություն*, Եր., «Տնտեսագետ», 2016:
3. Աթոյան Վ., Օտարերկրյա ազդեցության հիմնախնդիրները ուղեղային կենտրոնների ոլորտում, «*Ամբերդ» տեղեկագիր, 5*(6), 2020:
4. Աթոյան Վ., Ժառանգության վրա հիմնված ուղեղային կենտրոնները, «*Ամբերդ» տեղեկագիր, 4*(5), 2020:
5. Աթոյան Վ., Ուղեղային կենտրոնների ռազմավարական արդիականացման հարցեր, «*Ամբերդ» տեղեկագիր, 3*(4), 2020:
6. Աթոյան Վ., Կրթությունից ուղեղային կենտրոն (2020, փետրվարի 2). *Invest*. https://investmagazine.am/2020/02/18/կրթությունից-ուղեղային-կենտրոն/?fbclid=IwAR12VpHgJKJfuETp_PvM00MwUdJ0yJK_JgSCC4yEuxLZCAJagJNQ0I8EmOs
7. Աթոյան Վ., *Ուղեղային կենտրոններ. ռազմավարական գաղափարների դարբնոցները*. Եր., «Զանգակ», 2019:
8. Աթոյան Վ., Մովսիսյան Շ., *Չինաստանի ուղեղային կենտրոնները*, Եր., «Տնտեսագետ», 2016:
9. Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա., *Ուղեղային կենտրոնները արդի քաղաքական գործընթացներում*, Եր., «Տնտեսագետ», 2016:

[70] Տե՛ս **Диксон П.,** *Фабрики мысли*. М., Изд-во АСТ, 2004, էջ 129:

10. Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա., Մովսիսյան Շ., *Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները*, Եր., «Տնտեսագետ», 2015:
11. ԱԺ-ն և «Ամբերդ» հետազոտական կենտրոնը համագործակցության հուշագիր են ստորագրել (2017, հուլիսի 21), *Արմենպրես*. https://armenpress.am/arm/news/899509/azh-n-ev-amberd-hetazotakan-kentrony-hamagortsakcutyan.html
12. «Ամբերդը»՝ աշխարհի համալսարանական ուղեղային կենտրոնների Top 100-յակում (2019, փետրվարի 4), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/world-top-100-think-tanks
13. «Ամբերդը»՝ հեղինակավոր ինստիտուտի զեկույցում (2016, ապրիլի 27), *«Կրթություն» շաբաթաթերթ*, *18-19*(731-732):
14. Անխախտ պարբերականություն՝ նոր հանդեսին, *Տնտեսագետ, 1*(707), 2020:
15. «Արմենպրեսը» և Տնտեսագիտական համալսարանը գործընկերներ են (2021, հունիսի 8), *Հայաստանի Հանրապետություն*. https://hhpress.am/socium/2021/1532/
16. Գալոյան Դ., Դիմորդների մեծ հետաքրքրությունը Տնտեսագիտական համալսարանի նկատմամբ վստահության և վարկանիշի բարձրացման արդյունք է (2022, հունիսի 24), *Արմենպրես*. https://armenpress.am/arm/news/1086824.html
17. Գալոյան Դ., Բարեփոխումների ուղին ընտրած Տնտեսագիտական համալսարանը զգալի ձեռքբերումներ է արձանագրել (2019, սեպտեմբերի 5), *Panorama.am*. https://www.panorama.am/am/news/2019/09/05/Դիանա-Գալոյան/2162528?fbclid=IwAR1a1zJkX2J5skjnnoaQ793mfk3t3UxDgEkdKxFuYq_0Cm887KT5OH2dYIE
18. Գալոյան Դ., ՀՊՏՀ-ում իրականացվում են համալիր բարեփոխումներ (2019, նոյեմբերի 6), *Banks.am*. https://banks.am/am/news/interviews/18089
19. Գալստյան Դ., Գեղամյան Վ., Նոր իրողություններ Ադրբեջանի հետազոտական կենտրոնների ոլորտում, *21-րդ ԴԱՐ, 4*(38), 2011:
20. Գիտահետազոտական գործունեություն, *Տնտեսագետ, 1*(692), 2017:
21. Գևորգյան Գ., Հարցազրույց Դ. Հախվերդյանի հետ. Ակադեմիական միտքը ծառայում է պետական կառավարմանը, *Տնտեսագետ, 5*(711), 2020:
22. Իրադարձություններ, գիտական սեմինարներ, *Տնտեսագետ, 5*(681), 2014:
23. Համագործակցություն՝ հանուն տնտեսական մրցակցության պաշտպանության. ստորագրվեց համագործակցության հուշագիր (2019, նոյեմբերի 29), *ՀՊՏՀ*. https://asue.am/news/cooperation-for-the-protection-of-economic-competition-a-memorandum-of-cooperation-was-signed?fbclid=IwAR3W6z_wSpDibhUgY4ODN2nBk0PkIVR2yHI7wN5lt4hpy3FGwwgDDfaVmp0
24. Համագործակցության հուշագիր (2018, դեկտեմբեր 13), *ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակ*. https://seco.am/information/press_releases/107?lang=hy

25. Համագործակցություն ՀՀ ԱԺ-ի և ՀՊՏՀ-ի միջև, «Ամբերդը»՝ տնտեսական հարցերով գիտական խորհրդատու-գործընկեր, *Տնտեսագետ, 4*(695), 2017:
26. Հայրապետյան Ռ., Մեր կարճաժամկետ արդյունքը ՀՊՏՀ հեղինակության փոփոխությունն է (2019, ապրիլի 2), *Banks.am*. https://banks.am/am/news/interviews/17109
27. Հարությունյան Գ., «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը, *21-րդ ԴԱՐ, 1*(35), 2011:
28. Հարությունյան Մ., Արցախի Հանրապետությունում ուղեղային կենտրոնի արդի խնդիրների ու առաջնահերթությունների մասին. *Գիտության և կրթության դերը պետության զարգացման գործում, Մեսրոպ Մաշտոց համալսարան*, Ս., «Դիզակ Պլյուս», 2022:
29. Հետազոտությունները պետք է ուղղորդել դեպի գործնական խնդիրների լուծում. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն (2013, սեպտեմբերի 11), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/news-2263
30. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2016 թ. հաշվետվություն (N/A), *ՀՊՏՀ*. https://asue.am/upload/files/amberd_reports/HASHVETVUTYUN_2016.pdf:
31. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, *Տնտեսագետ, 5*(676), 2013:
32. ՀՊՏՀ գիտական գործունեությունը վերլուծում է պրոռեկտոր Գագիկ Վարդանյանը, *Տնտեսագետ, 5*(696), 2017:
33. ՀՊՏՀ-ն և Տավուշի մարզպետարանը համատեղ հետազոտություն կիրականացնեն (2021, փետրվար 5), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/asue-and-tavush-marzpetaran-will-carry-out-joint-researches
34. ՀՊՏՀ-ն հետազոտական համալսարան դառնալու ճանապարհին, *Տնտեսագետ, 1*(672), 2013:
35. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2018 թ. հաշվետվություն (N/A), *ՀՊՏՀ*. https://asue.am/upload/files/amberd_reports/amberd-annual-report-2018.pdf
36. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ընդլայնում է միջազգային գործընկերների շրջանակը. վավերացվել է համագործակցության նոր հնարավորությունը (26.01.2017), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/news-605
37. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնն ու «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը գործընկերներ են (2014, նոյեմբերի 4), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/news-1694
38. ՀՊՏՀ-ի և Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի համաշխարհային տնտեսագիտության և քաղաքագիտության ինստիտուտի միջև համագործակցության հուշագիր է ստորագրվել (2019, մայիսի 22), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/amberd-center-and-the-institute-of-world-economy-and-political-science-of-the-chinese-academy-of-social-sciences-signed-a-memorandum
39. Մելիքյան Ջ., Բարսեղյան Ա., Սիմավորյան Ա., *Տարածաշրջանի հետազոտական կենտրոնները (Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա)*, Եր., «Նորավանք», 2015:

40. Մեկնարկել է «Ամբերդ. քրոնիկոն» հաղորդաշարը (2021, հոկտեմբերի 25), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/amberd-chronicle-program
41. Մեր մասին (N/A), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/amberd/about
42. Մկրտչյան Թ., Մելքումյան Զ., Օհանյան Գ., Պողոսյան Վ., Խաչիկյան Լ., *ՀՀ ցորենի և ալյուրի շուկաների հետազոտություն*, Եր., «Տնտեսագետ», 2021, https://doi.org/10.52174/978-9939-61-227-0
43. Մկրտչյան Թ., Համբարձումյան Է., Օհանյան Գ., Ղարագյոզյան Մ., Կարապետյան Ն., Գալստյան Մ., *ՀՀ թռչնամսի շուկայի հետազոտություն*. Եր., «Տնտեսագետ», 2022, https://doi.org/10.52174/978-9939-61-250-8
44. Մովսիսյան Մ., Ղանթարչյան Ռ., Կեսոյան Ն., Կարապետյան Լ., Հարությունյան Գ., Պապոյան Տ., Մարկոսյան Ա., Գևորգյան Վ., Ղանթարչյան Լ., *ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում*. Եր., «Տնտեսագետ», 2022, https://doi.org/10.52174/978-9939-61-245-4
45. Պաշտոնավարման չորս տարի, *Տնտեսագետ, 2*(683), 2015:
46. Սարուխանյան Ս., «Ուղեղային կենտրոնները» Իսրայելում. ազգային և ցանցային կառույցների համադրություն, *21-րդ ԴԱՐ, 6*(28), 2009:
47. Սարուխանյան Ս., Իրանի «ուղեղային կենտրոնները», *«Նորավանք» ԳԿՀ, 2009,* http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4230
48. Սիմավորյան Ա., Թուրքիայի ուղեղային կենտրոնների զարգացման նախադրյալները. այժմեական խնդիրներ, *21-րդ ԴԱՐ, 6*(46), 2012:
49. Սիմավորյան Ա., Թուրքիայի փորձագիտական կենտրոնների որոշ հարցերի շուրջ, 2019, *(hal-03317988)*:
50. Սիմավորյան Ս., Հայկական հետազոտություններ Թուրքիայի ուղեղային կենտրոններում, *Գլոբուս, 5*, 2014:
51. Տնտեսագիտական համալսարանի ուղեղային կենտրոնը հրատարակել է «Ամբերդ» տեղեկագիրը. շնորհանդեսը կայացավ այսօր (2019, դեկտեմբերի 16), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/presentation-of-amberd-bulletin
52. Տրվեց նորաստեղծ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատանքների պաշտոնական մեկնարկը (2013, հունիս 14), *ՀՊՏՀ*. https://asue.am/am/news/news-2357
53. Диксон, П. (2004). *Фабрики мысли*. М.: Изд-во АСТ.
54. Abb, P. (2015). China's Foreign Policy Think Tanks: institutional evolution and changing roles. *Journal of Contemporary China*, *24*(93). https://doi.org/10.1080/10670564.2014.953856
55. Abella, A. (2008). *Soldiers of reason: The RAND corporation and the rise of the American empire*. New York: Harcourt, Inc.
56. Abelson, D.E. (2006). *Capitol Idea: Think Tanks and US Foreign Policy*. Montreal-Kingston: McGill-Queen's University Press.
57. Abelson, D.E. (2002). *Do Think Tanks Matter?: Assessing the Impact of Public Policy Institutes* (2nd ed.). Montreal-Kingston: McGill-Queen's University Press.

58. Åberg, P., Einarsson, S., & Reuter, M. (2021). Correction to: Think Tanks: New Organizational Actorsin a Changing Swedish Civil Society. *Voluntas, 32*. https://doi.org/10.1007/s11266-019-00174-9
59. Ahmad, M. (2008). US Think Tanks and the Politics of Expertise: Role, Value and Impact. *Political Quarterly, 79*(4).
60. Atoyan, K., Babajanyan, A., & Atoyan, V. (2021). The Modern Challenges of Higher Education Institutions in Armenia. *Asian Journal of Education and Social Studies*, *22*(4). https://doi.org/10.9734/AJESS/2021/v22i430540
61. Atoyan, V. (2022). Armenian Think Tanks are Facing Old and New Challenges. *On Think Tanks*. https://onthinktanks.org/articles/armenianthink-tanks-are-facing-old-and-new-challenges
62. Atoyan, V. (2021). Emerging Industry of Think Tanks in Armenia. *Messenger of ASUE*, *6*. https://doi.org/10.52174/1829-0280_2021_6_106
63. Atoyan, V., Ohanyan, S., & Malkjyan, A. (2015). Development prospects of Armenian university affiliated think tanks: AMBERD Research Center. *Almanach via Evrasia*, *4*.
64. Baertl, A., Gilbreath, D., & Nicolle, S. (2022). Think tank state of the sector report 2022. *On Think Tanks*. https://onthinktanks.org/publications/think-tank-state-of-the-sector-2022/
65. Bjerre-Poulsen, N. (1991). The Heritage Foundation: A Second-Generation Think Tank. *Journal of Policy History, 3*(2). https://doi.org/10.1017/S0898030600004838
66. Castillo-Esparcia, A., Castillero-Ostio, E., & Castillo-Díaz, A. (2020). The think tanks in Spain. Analysis of their digital communication strategies. *Revista Latina de Comunicación Social, 77*. https://www.doi.org/10.4185/RLCS-2020-1457
67. Denham, A., & Garnett, M. (1998). *British Think-Tanks and the Climate of Opinion*. London; Bristol, PA: UCL Press.
68. Dickson, P. (1971). *Think Tanks*. New York: Atheneum.
69. Drezner, D.W. (2017). *The Ideas Industry: How Pessimists, Partisans, and Plutocrats Are Transforming the Marketplace of Ideas*. New York: Oxford University Press.
70. Fuller, S. (2018). *Post Truth: Knowledge as a Power Game*. London-New York: Anthem Press.
71. Gonzales Hernando, M., Stone, D., & Pautz, H. (2017). Think tanks can transform into the standard-setters and arbiters of quality of 21st century policy analysis. *Impact of Social Sciences Blog*. http://eprints.lse.ac.uk/70024/
72. Hart, P.T., & Vromen, A. (2008). A new era for think tanks in public policy? International trends, Australian realities. *Australian Journal of Public Administration*, *67*(2).
73. Jezierska, K. (2022). Coming out of the liberal closet. Think tanks and de-democratization in Poland. *Democratization*. https://doi.org/10.1080/13510347.2022.2130259

74. Laux, T. (2018). *The cultural logics in the field of scientific policy advice in France. Analyzing the justifications in the organizational identity of think tanks*. FMSH-WP.
75. McGann, J.G. (2016). *The Fifth Estate: Think Tanks, Public Policy, and Governance*. Washington, D.C.: Brookings Institution Press.
76. McGann, J.G. (2007). *Think Tanks and Policy Advice in the U.S.: Academics, Advisors, and Advocates*. New York: Routledge.
77. McGann, J.G. (2019). *Think Tanks: The New Knowledge and Policy Brokers in Asia*. Washigton, D.C.: Brookings Institution Press.
78. Medvetz, T. (2004). *Think Tanks in America*. Chicago and London: The University of Chicago Press.
79. Parmar, I. (2004). *Think tanks and power in foreign policy: a comparative study of the role and influence of the Council on Foreign Relations and the Royal Institute of International Affairs, 1939-1945*. Houndmills: Palgrave Macmillan.
80. Penn Libraries. (N/A). *University of Pennsylvania*. https://repository.upenn.edu/think_tanks/
81. Rich, M.D. (2020). Think Tanks in the Era of Truth Decay. *RAND Corporation*. https://www.rand.org/blog/rand-review/2020/10/think-tanks-in-the-era-of-truth-decay.html
82. Rich, A. (2004). *Think Tanks, Public Policy, and the Politics of Expertise*. Cambridge: Cambridge University Press.
83. Rich, A. (2001). US think tanks and the intersection of ideology, advocacy and influence. *Nira Review*, *8*(1).
84. Schulzinger, R.D. (1984). The Wise Men of Foreign Affairs. The History of the Council on Foreign Relations. In *The Wise Men of Foreign Affairs. the History of the Council on Foreign Relations*. Columbia University Press.
85. Selee, A. (2013). *What should Think Tanks Do? A Strategic Guide to Policy Impact*. Stanford: Stanford University Press.
86. Smith, B. (1966). *The RAND Corporation: Case Study of a Nonprofit Advisory Corporation*. Cambridge, MA and London, England: Harvard University Press. https://doi.org/10.4159/harvard.9780674866256
87. Stone, D. (2001). Think Tanks, Global Lesson-Drawing and Networking Social Policy Ideas. *Global Social Policy*, *1*(3). https://doi.org/10.1177/146801810100100304
88. Stone, D. (1996). *Capturing the Political Imagination: Think Tanks and the Policy Process*. London: Routledge.
89. Struyk, R.J. (2003). *Managing Think Tanks: Practical Guidance for Maturing Organizations*. Washington DC: Urban Institute Press.
90. Struyk, R.J. (1999). *Think Tanks in Post-Soviet Bloc Democracies*. Washington, DC: Urban Institute Press.

ВАРДАН АТОЯН
Заведующий кафедрой общественных наук АГЭУ,
доктор политических наук

Связывая знание и политику: к десятилетию основания исследовательского центра «Амберд».– Статья посвящена освещению и оценке основных результатов десятилетней деятельности Исследовательского центра «Амберд» Армянского государственного экономического университета. В рамках исследования в основном были использованы институциональный и исторический методы исследования. В ходе исследования были собраны, обработаны и проанализированы материалы и документы, опубликованные центром «Амберд», информация и упоминания о центре в СМИ, в пресс-релизах законодательных и исполнительных органов власти, а также интервью и публикации представителей Армянского государственного экономического университета и центра «Амберд». Во время проведения исследования немаловажную вспомогательную роль сыграл фактор собственного многолетнего опыта работы автора в данном исследовательском центре.

В результате проведенного исследования определено место и роль центра в публичной политике Армении на данном этапе, намечен характер отношений центра с ведомствами, которые ответственны за разработку и реализацию политики в стране, отмечены успехи и те направления деятельности, которые еще подлежат совершенствованию. Результаты и выводы исследования могут быть полезны для разработки долгосрочной стратегии развития центра «Амберд».

Ключевые слова: *«Амберд», Армянский государственный экономический университет, мозговой центр, фабрика мысли, исследовательский центр, публичная политика, знание, исследование*
JEL: D80, I23
DOI: 10.52174/29538114_2023.1-86

VARDAN ATOYAN
Head of the Chair of Social Sciences ASUE,
Doctor of Sciences (Political Science)

Bridging Knowledge and Policy: Towards the Tenth Anniversary of the Foundation of «Amberd» Research Center.– The paper is devoted to highlighting and evaluating the main results of the ten-year activity of the «Amberd» Research Center of the Armenian State University of Economics. The study mainly used the institutional and historical research methods. In the course of the study, materials and documents published by the «Amberd» Center, information and references to the Center in

the media, in press releases by legislative and executive authorities, as well as interviews and publications of the representatives of the Armenian State University of Economics and the «Amberd» Research Center were collected. The Author's extensive experience in this research institution provided valuable support throughout the study.

The research identified the position and role of the Center in the public policy of Armenia at this stage, outlined the nature of the relationship of the Center with the institutions responsible for the development and implementation of policy in the state, highlighted the achievements and areas that require further development. The results and conclusions of the study can be useful for designing a long-term development strategy for the «Amberd» Research Center.

Keywords: «*Amberd», Armenian State University of Economics, think Tank, research center, public policy, knowledge, research*
JEL: D80, I23
DOI: 10.52174/29538114_2023.1-86